



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
ք. Մարալիկ, Մաղաթյան փ. 1, հեռ. 0242- 2-22-37, ani.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 87 -Ա

<<26>> հունիսի 2023 թվականի

քաղաք Մարալիկ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԱԼԻԿ
ՔԱՂԱՔԻ Մ. ՄԱԴԱԹՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԱՌԱՋԻՆ ՓԱԿՈՒՂՈՒ 2/3 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏԵՎՈՂ,
ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ
ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ
ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 08-003-0042-0033 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,0016 ՀԵԿՏԱՐ
ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ԿԱՐԳՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ
ՔԱՂԱՔԱՑԻ ԿԱՄՈ ԿԱՐԱՊԵՏԻ ԱՅՎԱԶՅԱՆԻՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՎՃԱՐԻ ՉԱՓ
ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 48¹-րդ հոդվածի 1-ին, 4-րդ, 8-րդ մասերի, 56-րդ հոդվածի 5-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որշմամբ հաստատված <<Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի տրամադրման կարգի>> 46.2.-րդ կետի <<ա>> ենթակետի դրույթներով և հաշվի առնելով, որ համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության, ընդհանուր օգտագործման գործառնական նշանակության 08-003-0042-0033 կադաստրային ծածկագրով 0,0016 հեկտար մակերեսով հողամասը ընդգրկված է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողերի կազմում, հաշվի առնելով քաղաքացի Կամո Կարապետի Այվազյանի 2024 թվականի մայիսի 3-ի դիմումը՝ քաղաքային պուրակում առևտրի և սպասարկման օբյեկտ տեղադրելու մասին.

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին
որոշում է՝**

1. Համայնքի ղեկավարի առաջարկությամբ, տալ համաձայնություն՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքի Մ. Մաղաթյան փողոցի առաջին փակուղու 2/3 հասցեում գտնվող, համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության, ընդհանուր օգտագործման

գործառնական նշանակության 08-003-0042-0033 կադաստրային ծածկագրով 0,0016 հեկտար մակերեսով հողամասը /Վկայական՝ 03062024-08-0018, հասցե՝ մարզ Շիրակ, Անի համայնք, քաղաք Մարալիկ, Մ. Մադաթյան փողոց 1-ին փակուղի, 2/3 հողամաս/ ուղղակի կարգով, կառուցապատման իրավունքով, 15 /տասնհինգ տարի/ ժամկետով, տարեկան 20 000 /քսան հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ վճարով օգտագործման տրամադրել քաղաքացի Կամո Կարապետի Այվազյանին /Նույնականացման քարտ՝ 010825222, տրված՝ 13.05.2019թ. 022-ի կողմից, հաշվառման հասցե՝ մարզ Շիրակ, Անի համայնք, գյուղ Սառնաղբյուր, 5-րդ փողոց 2-րդ շենք, բնակարան 2, հետագայում՝ Քաղաքացի՝ այդ հողամասում առևտրի և սպասարկման օբյեկտ տեղադրելու նպատակով:








2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար՝ Արման Սարիբեկյանին.

ա) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Քաղաքացու հետ կնքել հողամասի կառուցապատման իրավունքի պայմանագիր.

բ) Սույն որոշումից բխող իրավունքները օրենքով սահմանված կարգով ենթակա են պետական գրանցման՝ Քաղաքացու միջոցներով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

	Կողմ - 11	Դեմ - 0	Ձեռնպահ - 0
Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ		_____	_____
Ե. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ		_____	_____
Ռ. ԱՐՇԱԿՅԱՆ		_____	_____
Է. ՈՒՌՈՒՏՅԱՆ		_____	_____
Ա. ՇԱԲՈՅԱՆ		_____	_____
Հ. ԶԱՏԻԿՅԱՆ		_____	_____
Ժ. ԱԼԵԲՅԱՆ		_____	_____
Գ. ԱՂԱԲԵԿՅԱՆ		_____	_____
Ն. ՍԱՐՈՅԱՆ		_____	_____
Գ. ԹԱԹԵՎՈՍՅԱՆ		_____	_____

